

Կալիֆոռնիա նահանգի Վերապատրաստման նպաստներ

Կալիֆոռնիա նահանգի Վերապատրաստման նպաստները (California Training Benefits, CTB) գործազրկության ապահովագրության (Unemployment Insurance, UI) հայցվորներին հնարավորություն են տալիս շարունակելու իրենց կրթությունը, կատարելագործելու հմտությունները կամ նոր արհեստ սովորելու UI նպաստներ ստանալու ընթացքում՝ հաճախելով Զբաղվածության զարգացման վարչության (Employment Development Department, EDD) կողմից հաստատված դպրոցական կամ վերապատրաստման կրթական ծրագրի:

CTB-ի ընտրված մասնակիցները EDD-ի կողմից հաստատված վերապատրաստման ծրագրին հաճախելու ընթացքում ազատված են UI հայցի՝ աշխատանքի համար պատրաստ լինելու, աշխատանք փնտրելու և հարմար աշխատանք ընդունելու վերաբերյալ սովորական պահանջներից: UI հայցվորները, ովքեր դպրոցական կամ վերապատրաստման ծրագրին հաճախելու մասին հարցում են կատարում նախքան իրենց 16-րդ շաբաթվա կանոնավոր UI նպաստների վճարումների ստացումը, կարող են վերապատրաստման դասընթացի երկարաձգման դեպքում նաև իրավունք ունենալ ստանալու լրացուցիչ շաբաթների նպաստներ:

EDD-ն պետք է վերապատրաստման դասընթացի կազմակերպիչը ստուգի UI հայցվորի գրանցումն ու հաճախումը, որից հետո կորոշի CTB-ին մասնակցելու նրա իրավունակությունը՝ վերապատրաստման ծրագրի տեսակից անկախ:

Մասնակցության իրավունք տվող վերապատրաստման ծրագրեր

UI հայցվորները, ովքեր հաճախում են կառավարության կազմակերպած վերապատրաստման ծրագրերին կամ մասնակցում են որոշ տեսակի հովանավորյալ վերապատրաստման դասընթացների, կարող են CTB-ին մասնակցելու իրավունք ունենալ: Երբ EDD-ն ստուգի հայցվորի գրանցումն ու հաճախումը, կհաստատվեն վերապատրաստման ծրագրերի հետևյալ տեսակները:

Կառավարության կազմակերպած վերապատրաստման ծրագրեր

- «Զբաղվածության ոլորտում նորարարությունների և նոր հնարավորությունների մասին» դաշնային օրենք (Federal Workforce Innovation and Opportunity Act).
- Կալիֆոռնիա նահանգի Աշխատանքի համար վերապատրաստման խումբ (California Employment Training Panel).
- Ծյուղային հարմարվողականության հարցերում օգնության դաշնային ծրագիր (Federal Trade Adjustment Assistance).
- Կալիֆոռնիա նահանգի «Անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների նյութական օգնություն և աշխատանքի տեղավորում» (California Work Opportunity and Responsibility to Kids).
- Կալիֆոռնիա նահանգի «Վերապատրաստման դասընթացների իրավունակ կազմակերպիչներ» (Eligible Training Provider) ցուցակում նշված ծրագրեր և ծառայություն մատուցողներ.

- մեկ առարկայի ուսուցման հավատարմագրված ծրագրեր K - 12 մաթեմատիկայի, գիտության կամ հատուկ կրթության ոլորտում, որոնք հաստատված են Կալիֆոռնիա նահանգի Ուսուցման հավատարմագրման հարցերով հանձնաժողովի (California Commission on Teaching Credentialing) կողմից:

Հովանավորյալ վերապատրաստման ծրագրեր

- Արդյունաբերության առնչվող վերապատրաստման ծրագրերի բնագավառում գործող միության կամ առևտրա-արդյունաբերական կազմակերպության ակտիվ անդամներ, ովքեր պատրաստ են ուղևորությունների մեկնելու.
- գործատուի կամ գործատուների ասոցիացիայի կողմից հովանավորվող վերապատրաստման դասընթացներ.
- նահանգային կամ դաշնային մարմինների կողմից հաստատված աշկերտական վերապատրաստման դասընթացներ:

Ինքնուրույն մասնակցություն վերապատրաստման դասընթացներին

Այն հայցվորները, ովքեր UI նպաստներ ստանալու իրավունք ունեն և ինքնուրույն են կազմակերպում իրենց մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին, կարող են CTB-ի համար իրավունակ լինել միայն այն դեպքում, եթե համապատասխանում են վերապատրաստման դասընթացներին ինքնուրույն մասնակցության վերաբերյալ բոլոր օրենսդրական պահանջներին, այն է՝

- վերապատրաստման ծրագիրը տալիս է աշխատելու հնարավորություն կամ հմտություններ, որոնք պահանջված են աշխատանքի տեղական շուկայում.
- վերապատրաստման ծրագիրը արտադրությունից կտրված է (սովորաբար՝ շաբաթական առնվազն 20 ժամ կամ կիսամյակային կամ եռամսյակային 12 միավոր).
- վերապատրաստման դասընթացի կազմակերպիչը լիովին հավատարմագրված է ԱՄՆ Կրթության նախարարության (U.S. Department of Education) կամ Կալիֆոռնիա նահանգի Հետմիջնակարգ մասնավոր կրթության վարչության (California Bureau for Private Postsecondary Education) կողմից.
- հնարավոր է վերապատրաստման ծրագիրն ավարտել ողջամիտ ժամանակում (ընդհանուր առմամբ՝ երկու տարուց ոչ ավելի).
- հնարավոր է հաջողությամբ ավարտել վերապատրաստման ծրագիրը, նույնիսկ եթե հայցում հասանելի ՍՈՆԱՍՆԵՐԻ առավելագույն գումարը բավարար չէ վերապատրաստման ծրագրի ամբողջ ընթացքում ծախսերը ծածկելու համար:

Վերապատրաստման դասընթացի երկարաձգման իրավունակություն

Վերապատրաստման դասընթացի երկարաձգման հայտ ներկայացնելու իրավունք ունենալու համար պետք է մասնակիցները համապատասխանեն CTB-ի իրավունակության բոլոր չափանիշներին և դպրոցական կամ վերապատրաստման ծրագրին հաճախելու մասին հարցում կատարեն նախքան իրենց 16-րդ շաբաթվա կանոնավոր ՍՈՆԱՍՆԵՐԻ վճարումների ստացումը: Վերապատրաստման դասընթացի երկարաձգման նպաստները վճարման ենթակա են միայն այն ժամանակաշրջանի համար, երբ մասնակիցը հաճախում է հաստատված վերապատրաստման ծրագիր: Վերապատրաստման դասընթացի երկարաձգումները կարող են տրամադրել մինչև առավելագույնը 52 շաբաթվա նպաստների վճարումներ, որոնցից հանվում են հայցվորին վճարման ենթակա բոլոր մյուս ՍՈՆԱՍՆԵՐԻ: Վերապատրաստման դասընթացի միայն մեկ երկարաձգում է թույլատրվում յուրաքանչյուր ՍՈՆԱՍՆԵՐԻ համար: Վերապատրաստման դասընթացի երկարաձգումները վճարման ենթակա չեն երեք շաբաթից ավելի տևող ամառային արձակուրդի ընթացքում:

Ուսման վարձ, գրքեր և վճարներ

EDD-ն չի վճարում դպրոցի կամ վերապատրաստման հետ կապված որևէ ծախս, օրինակ՝ ուսման վարձը, վճարները, գրքերը, պարագաները կամ փոխադրումը: Բայց մասնակիցները կարող են դիմել վերապատրաստումը ֆինանսավորող այլ նահանգային, դաշնային կամ գործատուների ծրագրերի համար: Ֆինանսական օգնություն տրամադրող ծրագրերի այլ տեսակների մասին ավելին իմանալու համար այցելեք **www.studentaid.ed.gov** կայքը:

Լրացուցիչ տեղեկություններ

CTB ծրագրից օգտվելու օրենսդրորեն սահմանված իրավունակության դրույթները շարադրված են Կալիֆոռնիա նահանգի Գործազրկության ապահովագրության կանոնագրի (California Unemployment Insurance Code) հոդված 1.5-ում: CTB ծրագրի մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար այցելեք **www.edd.ca.gov/CTB** կայքէջը:

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռող գործատու-ծրագիր է: Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին: Ծառայությունների, օգնության և (կամ) այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարվեն 1-866-490-8879 (ձայնային) համարով զանգահարելու միջոցով: TTY օգտագործողներին խնդրում ենք զանգահարել Կալիֆոռնիայի Կոմունալ տոհմային ծառայության (California Relay Service) 711 համարով: